Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության խորհրդի 2021 թվականի
մայիսի 27-ի N 2-2 որոշմամբ,
խորհրդի նախագահ
Վ. Խաչատրյան
27 մայիսի 2021 թ.

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ համալսարան) կոլեգիալ կառավարման մարմինը խորհուրդն է, որը համալսարանի գործունեությունը նպատակամղում է գլխավոր խնդիրների կատարմանը:

2. Խորհրդի աշխատանքների սկզբունքները, կառուցվածքը, ձևավորման կարգը և աշխատակարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համալսարանի կանոնադրությամբ և սույն աշխատակարգով:

II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Խորհուրդը՝

1) քննարկում և հաստատում է համալսարանի բյուջեն,

2) ռեկտորի ներկայացմամբ՝ հաստատում է համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրերը.

3) լսում և գնահատում է համալսարանի տարեկան գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությունը.

4) ընտրում է համալսարանի ռեկտորին, մասնաճյուղերի տնօրեններին.

5) քննարկում և սահմանված կարգով հիմնադրին ներկայացնում է առաջարկություններ համալսարանի կանոնադրության, դրա մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ.

6) հաստատում է իր աշխատակարգը, ռեկտորի, մասնաճյուղերի տնօրենների ընտրությունների ընթացակարգերը.

7) հաստատում է համալսարանի կառուցվածքը:

III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

4. Համալսարանի խորհրդի անդամների թիվը 20 է:

(4-րդ կետը փոփ., խմբ. 10.01.2022 N 3-2)

5. Խորհուրդը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության, հիմնադրի և պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) ներկայացուցիչներից:

6. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում համալսարանի կառուցվածքային միավորները՝

1) համալսարանի կառուցվածքային միավորների կողմից խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել համալսարանի ցանկացած աշխատող.

2) համալսարանի կառուցվածքային միավորներից առաջադրված անձանց թեկնածություններն ընտրվում են համալսարանի գիտական խորհրդում և ներկայացվում լիազոր մարմին.

3) պրոֆեսորադասախոսական կազմից ընտրված խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը:

7. Համալսարանի ուսանողության ներկայացուցիչներից խորհրդի անդամության թեկնածուներ են առաջադրում ֆակուլտետների ուսանողական խորհուրդները՝

1) ֆակուլտետների ուսանողական խորհուրդների կողմից խորհրդի անդամության թեկնածու կարող է առաջադրվել բարձր առաջադիմություն և հասարակական ակտիվ դիրքորոշում ունեցող ցանկացած սովորող (ուսանող կամ ասպիրանտ).

2) համալսարանի ուսանողական խորհուրդը ընտրում է ֆակուլտետներից առաջադրված սովորողների թեկնածությունները և ներկայացնում լիազոր մարմին.

3) ուսանողության կողմից ընտրված խորհրդի անդամները կազմում են խորհրդի անդամների 25 տոկոսը:

8. Հիմնադրի անունից խորհրդի անդամներ է առաջադրում Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանցից (խորհրդի կազմի 25 տոկոսը):

(8-րդ կետը փոփ., խմբ. 10.01.2022 N 3-2)

9. Լիազոր մարմնի կողմից խորհրդի անդամներ են առաջադրվում կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ (խորհրդի կազմի 25 տոկոսը):

(9-րդ կետը փոփ., խմբ. 10.01.2022 N 3-2)

10. Առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա խորհրդի կազմը, լիազոր մարմնի ներկայացմամբ, հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

11. Խորհուրդն իր կազմից, բացի ուսանողության ներկայացուցիչներից, ընտրում է նախագահ: Խորհրդի նախագահը չի կարող լինել համալսարանի հաստիքային աշխատող (դեկան, ամբիոնի վարիչ, դասախոս): Խորհրդի նախագահը համալսարանում պահպանում է ժամավճարի սկզբունքով դասախոսելու իրավունքը:

12. Խորհրդի քարտուղարը համալսարանի գիտական քարտուղարն է:

13. Խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում, այն համալրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան:

IV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Խորհրդի անդամներն իրավունք ունեն՝

1) մասնակցելու խորհրդի նիստերին ձայնի իրավունքով.

2) ներկայացնելու առաջարկություններ խորհրդի արտահերթ նիստեր հրավիրելու, խորհրդի իրավասության հարցերի և սույն աշխատակարգի փոփոխման վերաբերյալ:

15. Խորհրդի անդամները պարտավոր են՝

1) մասնակցելու խորհրդի հերթական և արտահերթ նիստերին.

2) կատարել խորհրդի և խորհրդի նախագահի հանձնարարությունները:

V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

16. Համալսարանի խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

17. Խորհրդի նիստերը գումարվում են տարեկան առնվազն մեկ անգամ: Դրանք համարվում են իրավազոր՝ խորհրդի անդամների առնվազն 2/3-ի մասնակցության դեպքում: Խորհրդի նիստերը կարող են կազմակերպվել նաև հարցման կարգով և առցանց եղանակով, բացառությամբ փակ գաղտնի քվեարկություն պահանջող հարցերի:

18. Խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե խորհուրդը դրա մասին այլ որոշում չի ընդունում:

19. Արտահերթ նիստերը հրավիրվում են հիմնադրի, լիազոր մարմնի, համալսարանի ռեկտորի, գիտական խորհրդի, խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

20. Խորհրդի արձանագրությունը՝ 2 օրինակով, կազմում է խորհրդի քարտուղարը: Արձանագրությունը ստորագրում են խորհրդի նախագահը և քարտուղարը:

VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

21. Սույն աշխատակարգի ընդունումը և դրա մեջ առաջարկվող փոփոխություններն ու լրացումները կատարվում են խորհրդի նիստի որոշմամբ:

22. Խորհրդի գործունեությունը, նրա իրավասությունների ժամկետները կարող են դադարեցվել նրա հետագա գոյությունը բացառող օրենսդրական փոփոխությունների կամ համալսարանի լուծարման և օրենքով սահմանված այլ դեպքերում:

(աշխատակարգը հաստատվել է ԵՊՏԻ խորհրդի 27.01.2006 նիստում (արձ. N 2), խմբ. ՀՀ կառ. 08.06.2006 N 799-Ն որոշման հիման վրա, խմբ. ՀՊՏՀ խորհրդի 17.01.2013 նիստում (արձ. N 7) ՀՀ կառ. 15.11.2012 N 1436-Ն հիման վրա, լրացվել և նոր խմբագրությամբ հաստատվել 27.05.2021 N 2-2, փոփ., խմբ. 10.01.2022 N 3-2)